պէս կարասջիք և մարթասջիք։ Սակայն կամիմք, և ստուգիւ պատուիրեմք, զի ի նոյն այսպէս ձևացուցեալ՝ ևս և յայլ ապա՝ նորակերտ Եկեղեցւոջն, զԲարոզութիւն բանին Աստուծոյ, զմատակարարութիւն սուրբ խորհրդոյն և զայլ հանդիսութիւնս Եկեղեցականս, որք ծխակերականք են, կամ լինիցին, առնել ամենևին մի համարձակիցիք, եթէ ոչ ցոր վայր և յորքան ի ձեռն նոյն գիւղաքաղաքի կարգեալ Ժողովրդապետին այսուհետև կայցէք ի վերայ իշխանութեան։ Դարձեալ կամիմք և բացորոշեմք, զի այնք, որպէս ի վերայ դնի, ձեօք բանալի դպրոցք և ուսումնարանք՝ նոյն գիւղաքաղաքի կարգեալ Գահերիցուն, կամ ժողովրդապետի տեղւոյն ենթարկեսցեն միշտ և ամենևին յամենայնի վերատեսչութեանն, այցարարութեանն և ուղղաւորութեանն։ Իսկ զօրհնութիւնն նոյնոյ այսպէս ձևացուցանելի Եկեղեցւոյ ձերոյ, Պատուաւոր Տեառն Միքայէլի Դանիէլ՝ Գահակալ եկեղեցւոյն մերոյ Ալբայու Կանոնիկոսին, և բազմիցս ասացեալ նոյն գիւղաքաղաքի Գահերիցուն և ժողովրդապետին յանձն առնեմք։ Տուեալ եղև գիրս յԱմրոցի մեբում Ավինկիոյ՝ յաւուր երեսներորդի առաջնորդի ամսոյն Յուլիսի, յամին Տեառն ՌՉԾԳ.ին

Զիզիզմունդոս Անտոնիոս
Եպս. Տրանսիղուանիոյ

Ա՛ռ հրամանսն իւրոյ Եպիսկոպոսականի գերաբարձրութեանն
Անտոնիոս Շերետացի ստորագրեցի.
Վերոյասացելոյ Գերաբարձրութեանն իւրոյ
Մատրանապետ գրեցի

կնիք

ՃԼ.

Ցիշատակուած կաթողիկոսն է Աղեքսանդր Բ. «մականուամբ Ղարաղաշ[1]»։ Սա բռնի յանձն կ'առնու Էջմիածնի գահակալութիւնը՝ փոխանակ Նալեանի և Սահակ «Ահագին» անուանեալ վարդապետի, որոնք յաջորդաբար մերժած էին իրենց ընտրութիւնը։ Աղեքսանդր մէկ ու կէս տարի միայն կաթողիկոսութիւն ըրած է (1753 + 1755)։

Իսկ ինչ որ կը տեղեկացնէ անոր մասին մեր վաւերագիրը՝ նորութիւն է Զամչեանի պատմութեան համար։

Նշանակելի է նաև հայ ձեռագիրներ հաւաքելու և ապահովելու մասին Հ. Ասկերեանի կատարած շահեկան հետազօտութիւնը։

Մեր նամակագիրը իր թուղթին վերջը «Զմայր մաշտոցն դեռ որոնեմ» կը գրէ. արդեօք Ստ. Լեհացւոյն խմբագրած մաշտոցը պէտք է հասկնանք (տես վաւերաթուղթ ՃԿԴ)։ Մենք չունինք դեռ որոշ յայտնութիւն մը, ցորքան չենք հանդիպիր Մելգոնեան Աբրահոմ այն նամակին՝ ուր ակնարկուած մաշտոցին նկատմամբ ինք յանձնարարութիւն ըրած է։

Ամենապատիւ հօր մերոյ Տեառն Տեառն Ստեփանոսի վարդապետի,
և աբբայ հօր մեծի։ խոնարհուրեամբ բազմաւ ողջոյն։

... Աղեքսանդր կաթուղիկոսն ել գնաց ըստ Էջմիածին ի վերջն սեպտեմբերի. ասեն զսմանէ, թէ ի յուղարկել զսա պատրիարգին և ժողովրդեանն, ասացեալ իցէ առ նոսա։ Զլուսաւորչեան ազգ մեր եղբարք, ոմանք ի մէնջ խռովեցին, կամէի ի վաղուց հետէ առ

1. Զամչեան. Պատմ. Հայոց Հա. Գ. էջ 865